

2) Թէ արդեօք պատգամաւորը կարող է ունենալ մի ձայնից աւելի՝ յանձնարարուած ուրիշ թեմերից:

3) Թէ արդեօք թեմը կարող է ընտրել իւր ներկայացուցիչն ուրիշ թեմի ժողովրդից:

4) Արդեօք կաթողիկոսական կանդիտատը կարելի է ընտրել բացի եպիսկոպոսական աստիճան ունեցողներէ, նաեւ այլ հոգևոր աստիճանաւորներէ:

5) Հաւ չի լինիլ արդեօք զաղանի քուէարկութեամբ անել ընտրութիւնը ոչ միայն երկուսի ժամանակ, այլ և քառանուն ցանկը կազմելիս:

Բացի առաջարկուած հարցերից՝ Տ. Փոխարքան խնդրում է Վեհափառի կարծիքը և այլ փոփոխութիւնների մասին՝ որ Վեհափառը կարևոր կը համարի անել 1843 և 1865 թ. կաթողիկոսական ընտրական կանոնադրութեանց մէջ:

Այս առթիւ Վեհափառն բարեհաճել է անցեալ դեկտ. ամսին յատուկ կոնդակով նշանակել մի Յանձնաժողով՝ նախագահութեամբ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի, անդամակցութեամբ Տ. Տ. Կարապետ, Բագրատ, Մատթէոս եպիսկոպոսների և Տ. Բարդէն վարդապետի: Յանձնաժողովը մի քանի նիստ ունենալով այդ առթիւ՝ վերամշակել է եղած կանոնադրութիւնը կաթող. ընտրութեանց և քննութեան առել թեմերը շատացնելու վերաբերեալ խնդիրները ու ներկայացրել ի բարեհաճ տնօրէնութիւն Նորին Վեհափառութեան:

Եղած փոփոխութեանց մասին կաշխատենք այլ անգամ հաղորդել ի զիտութիւն ընթերցողներին:

1906 թ. Փարիզում հիմնուել է մի խումբ հայերի նախաձեռնութեամբ «Փարիզի Հայկական Միութիւն» որի վերջին 17-րդ յօդուածը հետեւեալն է. «Այն պարագային ուր ընկերութիւնը լուծուի, իր գրամագլուխն ու բոլոր գոյքերը պիտի յանձնուեն կէսը ամենայն Հայոց կաթողիկոսին, կէսը Պօլսոյ Հայոց Պատրիարքին՝ Հայ ժողովրդի կրթական գործին յատկացուելու համար»: Այս ընկերութիւնն արդէն լուծուած է և նորա անդամ գանձապահ մեծարգոյ Համբարձում Մելիքեանն համաձայն կանոնադրու-

Թեան իւր 2 փետրուարի 1914 թ. գրութեամբ ուղարկում է Ազգիս Վեհափառ Հայրապետին Միութեան դրամագլխի կէսը՝ կանխիկ դրամով 295 ռուբլի և երկու հազար չորս հարիւր ֆրանկ անուանական արժողութեամբ «Ville de Paris, 1871» տոկոսաբեր թղթեր։ Պարոն Հ. Մելիքեանն խնդրում է Նորին Վեհափառութիւնից «այդ գումարը համաձայն կանոնադրութեան գործադրել Հայ ժողովրդի կրթութեան համար, և եթէ հնարաւոր է, յատկացնել Գէորգեան Հոգևոր Ճեմարանին կամ Դպրոցական ֆոնդին»։ Վեհափառն յատկացրեց այդ գումարն Գէորգեան Ճեմարանին։

Միութեան դրամագլխի միւս հաւասար կէսն ուղարկուած է Կ. Պօլսի ամենապատիւ Պատրիարքին իւր նպատակին գործադրելու։

Ազգիս Վեհափառ Հայրապետին Կ. Պօլսի Ամենապատիւ Պատրիարքն իւր 27-ն յունվարի ներկայ 1914 թ. գրութեամբ հայկական հարցի վերաբերեալ հաղորդելով կարևոր տեղեկութիւններ՝ ի միջի այլոց գրում է. «Ազգային մեր դատը հասած է իր առաջին հանգրուանը, առաջին և սրբազան պարտք կը համարինք մեզ, յանուն մեր և ժողովներու, խորին երախտագիտութեան պարտքը հաստեցանել Ձեր ս. Օծութեան, որ Թրքահայ տառապած Ձեր հօտի աղերսները ի նկատի առիք և ոչինչ խնայեցիք անոնց վիճակին բարւոքման։ Ձեր Վեհափառութեան ջանքերը, բարեբախտ եմ ըսելու, որ ամուլ չմնացին և այսօր պիտի աւետեան, որ Հայկական պահանջներու հիմնական մասերու շուրջ վերջնականապէս զոյացաւ համաձայնութիւն Բ. Դրան և Ռուս կառավարութեան մէջ»։

Նորին Վեհափառութիւնը հեռգհետէ ստանում է զանազան տեղերից բազմաթիւ շնորհաւորական և շնորհակալական գրութիւններ ու հեռագիրներ Հայաստանում բերենորոգումներ մտցնելու ծրագիրն ընդունուած լինելու առթիւ։ Այս մասին կը հաղորդենք այլ անգամ։